



## Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

### «ՀԱՒԱՏԱՄԱՐ ԵՒ Ի ՄԻ ՄԻՂՅՆ, ՅԸՆԴՀԱՆՐԱՅԱՆ ԵՒ ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ»

«Էջմիածին» ամսագրի մայիս—հուլիս միացյալ համարի առաջին էջում տպագրվել է Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հունիս 4 թվակիր սրբատառ կոնդակը, մեր օրերում «եկեղեցական ցանկալի միության վերաբերյալ» Մայր Աթոռ Ս. Էջմիածնի դիրքի մասին:

Հայրապետական սույն բովանդակալից կոնդակը գրվել է ճիշտ ժամանակին: Դա կարևոր պատմական մի փաստաթուղթ է մեր օրերում եկեղեցիների միության հարցին նվիրված, իր իրավ և հեղինակավոր բանաձևումներով, որպես հարավատ վկայությունը Հայ Եկեղեցու պատմական առաքելության և դերին մեր ժողովրդի կյանքում, համապատասխան միաժամանակ՝ միութենական հարցում մեր նախնյաց սկզբունքներին և ուղղությանը, «որով և կհորդորենք և կհրավիրենք զձեզ, սիրելիք Մեր, բանիվ և գործով ընթանալ մեր լուսաբնակ նախնյաց մեկի ավանդ թողած ճանապարհին, անշեղ ու անասան պահելով մեր Առաքելական ու Ազգային Ս. Եկեղեցին, և անկեղծորեն, խնդությամբ գործել, իրականացած տեսնելու համար բոլոր քրիստոնյա եկեղեցիներու միությունն ու եղբայրությունը, Զրիստոսի կենարար սիրով»,—պատգամում է Հայոց Հայրապետը իր ժողովրդին:

Արդի ժամանակաշրջանում կրոնական կյանքը հատկանշվում է Ընդհանուր Եկեղեցու պատմության մեջ միջեկեղեցական հարաբերությունների աշխուժացման, եկեղեցիների մե-

ծեցման, հանդուրժողության, համագործակցության և հանուն ապագա եկեղեցական միության տարված շնորհակալ և խրախուսիչ աշխատանքներով:

Արդի միջազգային կյանքում, երբ տեղի են ունենում գաղափարական, գիտական, հասարակական, ընկերային, պատմական տեղաշարժեր, եկեղեցին ևս չի կարող ապրել մեկուսացած, կղզիացած վիճակում:

Քրիստոնեական եկեղեցիները արդի կյանքի մեծ հրամայականի առաջ, դուրս են եկել իրենց մեկուսացումից, մոտենում են միմյանց, փորձում են լեզու գտնել և միասին աշխատել: Ամեն կողմ շարժում, ժողով, հանդիպումներ, այցելություններ և համագործակցություն, փոխըմբռնում և նույնիսկ միության սրտագին արտահայտություններ:

Եկեղեցու առաջ նորից մեծ խնդիր է դրված՝ ժողովուրդների հոգևոր կյանքի մեջ իրեն վերահաստատելու, հավատի նոր վկայություն բերելու համապատասխան ժամանակի ոգուն, գիտության վարձացման, հոգևոր և բարոյական նոր արժեքների լույսի տակ: Որպես աստվածահիմն հաստատություն, Եկեղեցին պետք է ընթանա ժամանակի հետ, դարերի հետ բարձրանա, խորքում մնալով անաղարտ և անփոփոխ:

«Նորոգեցարուք նորոգութեամբ մտաց ձերոց, առ ի քննել զլաւն, և եթէ զի՛նչ են կամքն Աստուծոյ, բարի, հաճոյն և կատարեալն» (Հռովմ. ԺԲ 2):

Երկար բաժանումներից, պառակտումներից, բյուզանդական վեճերից հետո, Եկեղեցին, մեր օրերին, նորից փորձում է բուժել իր վերքերը, միասնական հավատով, հավաքական ճիգերով:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին ամենից ավելի գիտակից է եղել եկեղեցիների և կրոնների միջև անցյալում անհանդուրժող ոգու տխուր հետևանքներին:

Այս մտածումներով, մեր Եկեղեցին վերջին 50—60 տարիների ընթացքում իր մասնակցությունն է բերել միջեկեղեցական հանդիպումներին, որոնք մեծ իրադարձություններ են մեր ժամանակներում քրիստոնեական եկեղեցիների կյանքում համագործակցություն, քրիստոնեական սեր և եղբայրություն հաստատելու ճանապարհի վրա:

Գոհունակությամբ պետք է արձանագրել այն ուրախալի փաստը, որ այժմ քրիստոնեական աշխարհը մեծ հետաքրքրություն է հանդես բերում եկեղեցիների մերձեցման, համագործակցության հարցի շուրջ:

Նույն մտածումներով էլ, որ Հայ Եկեղեցին մասնակցել է 1927 թվականի Լոպանի, 1937 թվականի Էդինբուրգի և 1952 թվականի Լուդի Կարգի և հավատի ժողովներին:

Նորին Ս. Օծություն Ս. Տ. Վազգեն Ա Վեհափառ Հայրապետի գահակալության տասը տարիների ընթացքում, Հայաստանյայց Եկեղեցին թույր եկեղեցիների հետ շարունակել է պահել քրիստոնեական սիրո և բարեկամության սրտագին կապեր, մեր նախորդ հայրապետների ոգով:

Մեր Եկեղեցին, վերջին տասը տարիների ընթացքում, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հրահանգով և գիտությամբ, մասնակցել է ԱՄՆ-ի Ազգային եկեղեցիների համաժողովին (1957), Եկեղեցիների համաշխարհային խորհրդի երրորդ համագումարին՝ Դելիիում 1961 թվականին, համա-օրթոդոքս եկեղեցիների Հռոդոսի ժողովին 1962 թվականին, Վատիկանի 1963 և 1964 թվականների ժողովին, 1964 թվականի Մոնրեալի Կարգի և հավատի չորրորդ ժողովին և 1965 թվականին արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների պետերի Ադդիս-Աբեբայի համագումարին:

1962 թվականին, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի նախաձեռնությամբ, անդամակցեց Եկեղեցիների համաշխարհային խորհրդին:

Մեր օրերում և արդի պայմանների մեջ միջեկեղեցական հանդիպումներն ու շփումները օգտակար են և անհրաժեշտ այն իմաստով, որ դրանք կփարատեն եկեղեցիների միջև գոյություն ունեցող նախապաշարումները, կփշրեն հավատացյալներին իրարից բաժանող անբնական պատվարները, կցրեն փոխադարձ կասկածամտությունները և կստեղծեն եկեղեցիների

միջև իրարհասկացողության, վստահության, սիրո և հարգանքի մթնոլորտ:

Այս տեսակետից պատմական իրադարձություն հանդիսացող համաժողով էր 1965 թվականի հունվարի 15—21-ին Ադդիս-Աբեբայում գումարված Հայ, Եթովպական, Ղպտի, Ասորի և Հնդիկ Մալաբար արևելյան ուղղափառ հինգ եկեղեցիների հոգևոր պետերի ժողովը, որտեղ Հայ Եկեղեցու պատվիրակությունը անձամբ գլխավորում էր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Իր կողքին ունենալով Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսին և Երուսաղեմի հայոց պատրիարքին:

Ավելի քան հազար հինգ հարյուր տարիներից հետո, առաջին անգամ էր, որ միմյանց մոտ էին գալիս Արևելքի դավանակից միաբնակ թույր եկեղեցիները, որոնցից յուրաքանչյուրը, Ե դարից հետո, վարճացրել էր իր ինքնուրույն եկեղեցական կյանքը, իրեն հատուկ կյանքի և մտածման ձևերի մեջ, հարստացրել իր մշակույթը, լեզուն, գրականությունը, պահել իր ուղղափառ հավատը, ազգային ոգին ու ավանդությունները նույնությամբ և անաղարտ, ի գին անլուր զոհողությունների, այն աստիճան, որ անհաղորդ էին մնացել միմյանց կյանքին և գործունեության և տեսականորեն միայն համարվում էին դավանակից թույր եկեղեցիներ:

Ողջունելի էր Եթովպիայի քրիստոսասեր և հավատացյալ Կայսեր նախաձեռնությամբ և հրավերով գումարված ժողովը, որպես առաջին փորձ և նախաքայլ, որը նշանակելիորեն սատարեց արևելյան հինգ ուղղափառ և պատմական եկեղեցիների մերձեցման, և հասկացողության միջոցներ և ճանապարհներ գտավ հետագա էլ՝ ավելի համագործակցության համար:

Միջեկեղեցական այսպիսի հարաբերությունները և հանդիպումները հանդիսանում են հուսալի սկզբնավորություններ եկեղեցական ապագա ցանկալի միության:

Հայ Եկեղեցու սրտագին իղձն է եղել և է՝ իրականացած տեսնել քրիստոնեական եկեղեցիների և ժողովուրդների եղբայրությունը:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, ինչպես անցյալում, այժմ էլ, Մալր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, ողջունում է այն բարի ջանքերն ու միջեկեղեցական հանդիպումները, որոնց նպատակն է կայուն և վստահելի հող պատրաստել ապագա եկեղեցական միության, «միաբանութիւն Հոգւոյն յօրի խաղաղութեան» (Եփես. Դ 3):

«Եկեղեցին,— գրում է Վեհափառ Հայրապետը Իր կոնդակում,— իբրև աստվածային նախախնամության գործ, անշուշտ մեկ է և տիեզերական, սակայն աստվածային այդ տնօրինության իրագործումը երկրի վրա պեցած է և

կզգենու տարբեր տարազներ, համաձայն ժողովուրդներու հոգեկան դիմագծության և Աստուծո խոսքը ընկալելու և ապրելու կերպին և համաձայն պատմական իրադրությանց և ավանդություններուն, որոնց մեջ ծնած ու աճած են եկեղեցիները»:

Հայ Եկեղեցին քրիստոնեության հայկական մարմնառությունն է, հայկական ապրումն է՝ ճայ հոգու մեջ և հայ հողի վրա: Հայ Եկեղեցին Աստուծո մոտենալու հայոց ճանապարհն է: Բրիստոնեությունը հայ ժողովրդին վեր է ածել մի ամբողջական, համաժողովրդական, ազգային հոգևոր միության, հարապատրեն պահպանելով քրիստոնեական ոգին ու առաքելությունը: Հայ Եկեղեցին, ճիշտ է, է՛լ ավելի մշակել, հստակել, ավնվացրել և հարստացրել է մեր ազգային, հայկական հոգին, որպես ոգեկան հավաքականություն, սակայն առանց երբեք ժխտելու Բրիստոնով միությունը և մեկությունը Ընդհանուր Եկեղեցին:

Արդարև մեկ է Բրիստոնեական Եկեղեցին իր Գլխով, որ է Բրիստոս, մեկ՝ իր հավատով. «Առաքելական եկեղեցիք թեպետ և ընդ բազում տեղիս են, սակայն մի ասի վասն միասնական հաւատոցն» (Անձևացի):

Բրիստոնեական Եկեղեցին մեկ է իր կոչումով և առաքելությամբ. «Եթե բաժինք շնորհաց են, այլ Հոգին նոյն է» (Ա Կորնթ. ԺԲ 4):

Բրիստոնեական Եկեղեցին մեկ է իբրև հոգևոր ամբողջություն, որպես Բրիստոսի մարմին. «Մի մարմին ենք ի Բրիստոս, այլ իւրաքանչիւր միմեանց անդամք» (Հռովմ. ԺԲ 3):

Արդ, ի՞նչ են Հայ Եկեղեցու դիրքը և սկզբունքը եկեղեցական միության հարցում, մեր օրերում:

Վեհափառ Հայրապետը, Իր հունիս 4 թվակիր կոնդակում, հանգամանորեն և սպառնիչ կերպով գրել է այդ մասին.

«Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին, դավանաբանական հարցերու նկատմամբ իր մտածելակերպով և բանածներով թեև կմնա անշեղ ու հաստատ իր ավանդական ուղղափառ դիրքին վրա, սակայն, ինչպես անցյալի մեջ, այսօր ալ կառաջնորդվի «Միութիւն ի կարևորս և ապատութիւն յերկբայականս» հին ու բարերար սկզբունքով»: Ուրեմն, երբակցնում է Հայոց Հայրապետը, — «հույժ ցանկալի է, որ թուր եկեղեցիներու հետ մենք շարունակենք պահպանել ու մշակել իրավ քրիստոնեական եղբայրական կապեր, մեր Մայր Եկեղեցվո և մեր լուսաբանակ հայրապետներու ոգիով, եկեղեցիներու միջև միությունը տեսնելով ի Բրիստոս սիրո մեջ, փոխադարձ ճանաչման ու գնահատման մեջ, սերտ գործակցության մեջ»:

ԺԲ դարում Ներսես Շնորհալին (1166—1173), հայ և հույն եկեղեցիների հարաբերու-

թյունների բուռն օրերին, հույներին գրած իր «Գիր հաւատոց խոստովանութեան Հայ Եկեղեցւոյ» և «Սահմանք հաւատոց Հայաստանեայց Եկեղեցւոյ» նշանավոր գրություններում, եկեղեցական հարաբերությունների միակ և ճիշտ ուղին համարում էր քրիստոնեական սեղը, եղբայրությունը. «Յաղագս աստուածային սիրոյն հաղորդութեան և ոչ իբր ի մոլորութենէ դառնալով ի ճշմարտութիւն»:

«Հաւատն մեր ոչ է հնացեալ զի նորոգեսցի, և ոչ է թերի՝ զի լրացցի», — գրում է Սիմեոն Երևանցին:

Օրմանյան սրբազան, իր «Հայոց Եկեղեցի» հոյակապ աշխատության մեջ, մի առանձին գլուխ նվիրելով եկեղեցիների հարաբերությունների և միության փորձերին, գրում է. «Հայոց Եկեղեցին միաբանությունը հասկցավ միշտ բառին ճիշտ և սեղմ նշանակությամբ: Նա միաբանություն ըսելով ուլեց եկեղեցիներու միջև ունենալ հոգևորական հաղորդակցություն, փոխադարձ հարաբերություն և իրարու դիրքին հանդեպ հարգանք, յուրաքանչյուրին համար յուր շրջանակին և սահմաններուն մեջ ապատություն և ամենուն վրա տիրապետող քրիստոնեական սուրբ սերը: Նա երբեք չուլեց հանդուժել, որ միաբանությունը տիրապետության փոխվի և մարդորսության վերածվի» («Հայ Եկեղեցի», էջ 80):

Վեհափառ Հայրապետը եկեղեցական միության հարցում առաջնորդվում է Շնորհալու ոգով և Օրմանյանի ճանապարհով, երբ գրում է. «Դավանաբանական դիրքերու վերաբնության և միակերպումի ճանապարհով միութենական փորձերը տակավին կանխահաս են: Այսօր նման փորձեր կրնան դուռ բանալ նոր վեճերու, վստահորեն շփոթություն և դժգոհություն հառաջացնել հավատացյալներու գիտակցության մեջ, և տկարացում սիրո և հավատարմության՝ դեպի Մայր Եկեղեցին և հետևաբար քրիստոնեական հավատի տկարացում ժողովուրդի հոգեբանության մեջ, ի մասնավորի ազգային եկեղեցիներու պարագային»:

Որովհետև, ինչպես յուրաքանչյուր քրիստոնյա ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը, «Մեր Եկեղեցվո ծագման, կազմավորման ու պարզացման, պատմության ու ավանդություններուն և մեր ժողովուրդին հատուկ կրոնական ապրումներու դրսևորման կերպերուն մեջ մենք կգտնենք մեր ազգային, եկեղեցական, քրիստոնեական հարապատությունը և վավերականությունը», — գրում է Վեհափառ Հայրապետը, ճշմարտորեն խտացնելով մեր Եկեղեցու շուրջ երկու հազարամյակների պատմությունը և հայ ժողովուրդի առողջ, կենդանի հավատի վկայությունը:

Եկեղեցիների միություն երբեք չի նշանակում ինքնագլուխ, անկախ Աթոռների բարձում, ազգային պատմական եկեղեցիների վերամիավորում և ոչ էլ դավանական, վարդապետական, ծիսական միակերպության ստեղծում Եկեղեցու ծոցում, այլ միություն Զրիստոսի սիրով և Ավետարանի լուսի մեջ, եղբայրական հարաբերությունների մշակումով, փոխադարձ հանդուրժողությամբ, կենդանի համագործակցությամբ ի Զրիստոս, հարգանքի և հավասարության պայմաններում, «և ոչ տիրելով վիճակացն» (Ա Պետր. Ե 3):

Զրիստոնեական եկեղեցիների եղբայրական մերձեցումով և համագործակցությամբ միայն կարող է զորանալ Եկեղեցին և կատարել իր առաքելությունը ներկա կյանքի պայմանների մեջ:

«Չէ բաժանեալ Զրիստոս ի Պօղոս և յԱպօղոս և ոչ Եկեղեցի Նորա ի Հայս և ի Հռոմ կամ ի Ֆրանկ, թէպէտ և տկարացն կարծիք այսմ ծառայեն» (Լամբրոնացի):

Մեր Եկեղեցին և ժողովուրդը որդիական սիրով և սրտագին երախտագիտությամբ կընդունեն հայրապետական սույն պատմական արժեքավոր կոնդակը ևս, որպես ուղեցույց և պատգամ միջեկեղեցական հարաբերությունների բնագավառում և իրենց աղոթքներն ու ջանքերը կմիացնեն բոլոր այն ձեռնարկներին, որոնց նպատակն է քրիստոնեական եղբայրությունն ու սերը հաստատել եկեղեցիների միջև:

«Եւ մեք աղաչեսցուք զամենակալն Աստուած վասն միայնոյ, Սուրբ և Կաթողիկէ և Առաքելական Եկեղեցւոյ»:

